ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

27.03.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/31 գնման պայմանագրի

ք. Երևան « 13 » « 07 » 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Բեստ Քոնսթրաքշն» և «Եղիազարյան Շին» ՍՊ ընկերությունները (համատեղ) (այսուհետև՝ Կապալառու), որոնք գործում են համաձայն 16.02.2026 թվականի համատեղ գործունեության (կոնսորցիումի) N 1 պայմանագրի, ի դեմս «Բեստ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Մանուկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 27.03.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/31 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.7 կետը և **Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների** կատարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.*Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«Բեստ Քոնսթրաքշն» ՍՊԸ	«Եղիազարյան Շին» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ՀՀ ք. Երևան, Օստրովսկու փ. 48 տ.	ՀՀ ք. Երևան, Արտաշիսյան 44/4 բն.12
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900032479157	Հ/Հ 220663330011000	Հ/Հ 1570089895580100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00490097	ՀՎՀՀ 00515231

Վ.Պապիկյան/ _____ (ստորագրություն) Կ.Տ

Ա.Մանուկյան/ _____ (ստորագրություն) Կ.Տ

Ա.Խաչատրյան/ _____ (ստորագրություն) Կ.Տ